ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2025 թվականի N 2156-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 1869 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի՝ 2022 թվականի հոկտեմբերի 11-ի <<Մեծամոր համայնքին պատկանող ակումբին հասցե տրամադրելու մասին>> N1869 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման վերնագրում՝ <<ակումբին>> բառերը փոխարինել <<Մշակույթի տուն>> բառերով.

2) Որոշման 1-ին մասում՝ <<ակումբին>> բառերը փոխարինել <<Մշակույթի տուն>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդնման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2025 թվականի նոյեմբերի 17
ք.Մեծամոր

Հավելված 4
Մեծամոր համայնքի
ԱՌԿ պլանի

ՍԽԵՄԱ

Ազդարարման և տեղեկատվության փոխանակման



Ցուցակ

ԱՌԿ խորհրդի անդամների հեռախոսահամարների

h/h	Անուն Ազգանուն	Պաշտոն	Հեռախոսահամար
1	Էդգար Հովհաննիսյան	Մեծամոր համայնքի ղեկավար	077626212
2	Մարատ Հովհաննիսյան	Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար	041661888
3	Սարգիս Արշակյան	Մեծամոր համայնքի ղեկավարի տեղակալ	098008070
4	Ռոբերտ Ավետիսյան	Մեծամոր համայնքի ղեկավարի տեղակալ	077900607
5	Էդգար Ասատրյան	Մեծամոր համայնքի ավագանու անդամ	098108010
6	Աշոտ Բարեղամյան	Մեծամոր համայնքի ավագանու անդամ	093768588
7	Կարեն Հովհաննիսյան	Ալաշկերտ բնակավայրի վարչական ղեկավար	098424045
8	Արայիկ Հարությունյան	Ամասիա բնակավայրի վարչական ղեկավար	093646517
9	Արտակ Եղիազարյան	Այգեշատ բնակավայրի վարչական ղեկավար	077000373
10	Մանվել Հարությունյան	Արազափ բնակավայրի վարչական ղեկավար	093786464
11	Արշավիր Աղաջանյան	Արգավանդ բնակավայրի վարչական ղեկավար	093990209
12	Ռաֆիկ Մարգարյան	Արմավիր բնակավայրի վարչական ղեկավար	093605204
13	Գառնիկ Ծատուրյան	Արևիկ բնակավայրի վարչական ղեկավար	098824444
14	Արգամ Չվչյան	Բերքաշատ բնակավայրի վարչական ղեկավար	098094999
15	Արկադիա Հովհաննիսյան	Գետաշեն բնակավայրի վարչական ղեկավար	093041111
16	Ռոման Կարապետյան	Եղոգնուտ բնակավայրի վարչական ղեկավար	077550809
17	Նարեկ Փանոսյան	Երասխահուն բնակավայրի վարչական ղեկավար	093655551
18	Ռուբեն Ղազարյան	Հայկավան բնակավայրի վարչական ղեկավար	094919003
19	Էդգար Ենոքյան	Մարգարա բնակավայրի վարչական ղեկավար	041850485
20	Մարատ Հովհաննիսյան	Մրգաշատ բնակավայրի վարչական ղեկավար	077546454
21	Դավիթ Վարդանյան	Նալբանդյան բնակավայրի վարչական ղեկավար	094844460
22	Արթուր Ավետիսյան	Նոր Արմավիր բնակավայրի վարչական ղեկավար	093877742
23	Արման Լաչինյան	Նոր Արտագերս բնակավայրի վարչական ղեկավար	077052727
24	Հրայր Գալստյան	Նոր Կեսարիա բնակավայրի վարչական ղեկավար	093405716
25	Վարդգես Ալեքյան	Շենավան բնակավայրի վարչական ղեկավար	098250871
26	Կամսար Ղորղանյան	Ջանֆիդա բնակավայրի վարչական ղեկավար	098210033
27	Լևոն Վարդանյան	Ջրաշեն բնակավայրի վարչական ղեկավար	094322238
28	Միհրան Հովհաննիսյան	Վարդանաշեն բնակավայրի վարչական ղեկավար	098010107

29	Մխիթար Պետրոսյան	Տանձուտ բնակավայրի վարչական ղեկավար	098432032
30	Կարապետ Ասատրյան	Փշատավան բնակավայրի վարչական ղեկավար	095114285
31	Շողիկ Մուրադյան	Ակնալիճ բնակավայրի վարչական ղեկավար	055484880
32	Արթուր Կարապետյան	Տարոնիկ բնակավայրի վարչական ղեկավար	077749434

Հավելված N1
Մեծամոր համայնքի ղեկավարի
17 նոյեմբերի 2025թվականի
N 2157-Ա որոշման

ԿԱԶՄ

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1.խորհրդի ղեկավար՝ Էդգար Հովհաննիսյան /համայնքի ղեկավար/

2.խորհրդի ղեկավարի տեղակալ-տարահանման և պատսպարման պատասխանատու՝ Ռոբերտ Ավետիսյան /համայնքի ղեկավարի տեղակալ/

3. խորհրդի քարտուղար՝ Մարատ Հովհաննիսյան /աշխատակազմի քարտուղար/

4.ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Սարգիս Արշակյան/համայնքի ղեկավարի տեղակալ/

5.խորհրդի անդամներ՝

1) ավագանի Էդգար Ասատրյան

2) ավագանի Աշոտ Բարեղամյան

3) բնակավայրի վարչական ղեկավարներ՝

ա.Ալաշկերտ բնակավայրի վարչական ղեկավար՝Կարեն Հովհաննիսյան

բ.Ամասիա բնակավայրի վարչական ղեկավար՝ Արայիկ Հարությունյան

գ.Այգեշատ բնակավայրի վարչական ղեկավար՝ Արտակ Եղիազարյան

դ.Արազափ բնակավայրի վարչական ղեկավար՝ Մանվել Հարությունյան

ե.Արգավանդ բնակավայրի վարչական ղեկավար՝ Արշավիր Աղաջանյան

զ.Արմավիր բնակավայրի վարչական ղեկավար՝ Ռաֆիկ Մարգարյան

է.Արևիկ բնակավայրի վարչական ղեկավար՝ Գառնիկ Ծատուրյան

ը.Ակնալիճ բնակավայրի վարչական ղեկավար՝ Շողիկ Մուրադյան

թ.Բերքաշատ բնակավայրի վարչական ղեկավար՝ Արգամ Չվչյան

ժ.Գետաշեն բնակավայրի վարչական ղեկավար՝ Արկադիա Հովհաննիսյան

ի.Եղեգնուտ բնակավայրի վարչական ղեկավար՝ Ռոման Կարապետյան

լ.Երասխահուն բնակավայրի վարչական ղեկավար՝ Նարեկ Փանոսյան

խ.Հայկավան բնակավայրի վարչական ղեկավար՝ Ռուբեն Ղազարյան

ծ.Մարգարա բնակավայրի վարչական ղեկավար՝ Էդգար Ենոքյան

կ.Մրգաշատ բնակավայրի վարչական ղեկավար՝ Մարատ Հովհաննիսյան

հ. Նալբանդյան բնակավայրի վարչական ղեկավար՝ Դավիթ Վարդանյան

ձ.Նոր Արմավիր բնակավայրի վարչական ղեկավար՝ Արթուր Ավետիսյան

ղ.Նոր Արտագերս բնակավայրի վարչական ղեկավար՝ Արման Լաչինյան

ճ.Նոր Կեսարիա բնակավայրի վարչական ղեկավար՝ Հրայր Գալստյան

մ.Շենավան բնակավայրի վարչական ղեկավար՝ Վարդգես Ալեքյան

յ.Զանֆիդա բնակավայրի վարչական ղեկավար՝ Կամսար Ղորղանյան

ն.Զրաշեն բնակավայրի վարչական ղեկավար՝ Լևոն Վարդանյան

շ.Վարդանաշեն բնակավայրի վարչական ղեկավար՝Միհրան Հովհաննիսյան

ո.Տանձուտ բնակավայրի վարչական ղեկավար՝ Մխիթար Պետրոսյան

չ.Տարոնիկ բնակավայրի վարչական ղեկավար՝ Արթուր Կարապետյան

պ.Փշատավան բնակավայրի վարչական ղեկավար՝ Կարապետ Ասատրյան

4) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝

/Արմավիրի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար/(համաձայնությամբ),

բ.հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝

/Մեծամորի պարեկային ծառայության պետ/(համաձայնությամբ),

գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Կարեն Մաիլյան

/«Մեծամորի բարեկարգում»ՀՈԱԿ-ի փոխտնօրեն/,

դ.կապի պատասխանատու՝ /«ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ»ՓԲԸ Մեծամորի մ/ճ -ի ղեկավար (համաձայնությամբ),

ե.կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Ռուստամ Մարտիրոսյան

/համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ/,

ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Նորայր Դարբինյան/համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ/

թ.կոմունալ ապահովման և դիակների ճանաչման,հուղարկավորման կազմակերպման և հաշվառման պատասխանատու՝ Արթուր Ստեփանյան /«Մեծամորի բարեկարգում»ՀՈԱԿ-ի տնօրեն/,

ժ.անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման,կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Վարդան Բաղդասարյան/համայնքապետարանի սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ/:

Աշխատակազմի քարտուղար՝ Մարատ Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2025 թվականի N 2157-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի N1567-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 16-ի «Մեծամոր համայնքում աղետների ռիսկերի կառավարման պլանը հաստատելու և Մեծամոր համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N2512 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1567-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)Որոշմամբ հաստատված N1 և N4 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ համաձայն N1ևN4 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2025 թվականի նոյեմբերի 17
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2025 թվականի N 2158-Ա

«ԷՍ ԹԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրություն.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժինների աշխատակիցների կողմից 2025 թվականի հոկտեմբերի 10-ին կազմված արձանագրության հիման վրա, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1–ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է թիվ 35/25 վարչական վարույթը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժինների աշխատակիցների կողմից 2025 թվականի հոկտեմբերի 10-ին կազմված արձանագրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արտաշար բնակավայրի վարչական տարածքում գտնվող «ԷՍ ԹԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերությանը պատկանող գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ վարելահող գործառնական նշանակության հողատարածքն օգտագործվում էր ոչ նպատակային նշանակությամբ և խախտվել էին հողերի պահպանման կանոնները:

Արձանագրված դեպքով Մեծամորի համայնքապետարանի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող» հանձնաժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 17-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2025 թվականի հոկտեմբերի 27-ին ժամը 12:00-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով «Հայփոստ» ՓԲ ընկերության միջոցով պատշաճ ծանուցվել է «ԷՍ ԹԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերությունն՝ ի դեմս տնօրեն Դավիթ Կարապետյանի, սակայն փոստային անդորրագրի հետադարձ ծանուցումը հանձնաժողովը չէր ստացել: Ելնելով անհրաժեշտությունից և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի առաջին մասին ա/ ենթակետի՝ գործի քննարկման համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ձեռք բերել, որոնք, սույն օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, պարտավոր է ներկայացնել դիմողը, և վարչական վարույթի մնացած ժամկետում հնարավոր չէ ըստ էության որոշում ընդունել, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող» հանձնաժողովը գործի քննության նոր օր է նշանակել 2025 թվականի նոյեմբերի 13-ին ժամը 11:00-ին, որի վերաբերյալ «ԷՍ ԹԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերությունը կրկին ծանուցվել է, սակայն հետադարձ ծանուցումը «Հայփոստ» ՓԲ ընկերությունից չի ստացվել: Միաժամանակ նշված ծանուցումը տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) և ծանուցումը համարվում է հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

3. Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝գործի քննարկման համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ձեռք բերել, որոնք, սույն օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, պարտավոր է ներկայացնել դիմողը, և վարչական վարույթի մնացած ժամկետում հնարավոր չէ ըստ էության որոշում ընդունել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 օր ժամկետով: Այդ դեպքում թույլատրվում է մինչև երկու անգամ երկարաձգում՝ հիշյալ ժամկետի պահպանմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության, 53-րդ և 58-60-րդ հոդվածների պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության նպատակով՝ «ԷՍ ԹԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգել մինչև 10 օր ժամկետով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով Մեծամոր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2025 թվականի նոյեմբերի 17
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2025 թվականի N 2159-Ա

«ՍԵՆԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԱԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրություն.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի աշխատակիցների 2025 թվականի հոկտեմբերի 08-ին կազմված արձանագրության համաձայն, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Այգեշատ բնակավայրում կատարված աշխատանքային այցի ժամանակ, հայտնաբերվել և արձանագրվել է, որ «ՍԵՆԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության կողմից թիվ 04-010-0109-0033 համայնքին սեփականության իրավունքով պատկանող կատարվում էին ավազակոպճային խառնուրդի արդյունահանում, այսինքն՝ հողամասն օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ: Տվյալ պահին այնտեղ գտնվող աշխատակիցներին ցուցում էր տրվել դադարեցնելու աշխատանքները:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի՝ Մեծամոր համայնքի ղեկավարի կողմից՝ 2025 թվականի հոկտեմբերի 13-ին կայացվել է թիվ 1897-Ա որոշումը՝ «ՍԵՆԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության, ի դեմս տնօրեն Ս.Օխանյանի,նկատմամբ վարչական վարույթ հարուցելու մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«ՍԵՆԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության կողմից թիվ 04-010-0109-0033 համայնքին սեփականության իրավունքով պատկանող կատարվում էին ավազակոպճային խառնուրդի արդյունահանում, այսինքն՝ հողամասն օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ, որով խախտվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ պարբերության պահանջները:

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության» հանձնաժողովը 2025 թվականի հոկտեմբերի 28-ին ժամը 12:00-ին նշանակել է վարչական վարույթով գործի լսման օր, որի վերաբերյալ «ՍԵՆԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերությունը ծանուցվել է, որի ներկայացուցչի կողմից միջնորդություն էր ներկայացվել՝ վարչական վարույթի լսումը հետաձգելու և այն մեկ այլ օր նշանակելու մասին՝ քանի որ նույն օրը պետք է մասնակցեր ԱՐԱԴ/0168/02/25 քաղաքացիական գործով դատական նիստին: 2025 թվականի հոկտեմբերի 28-ին Մեծամոր համայնքի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի կողմից քննարկվել է ներկայացված միջնորդագիրը և որոշում է կայացրել, որ վարչական վարույթով գործի քննության օրը նշանակվում է 2025 թվականի նոյեմբերի 10-ին ժամը 11:30-ին, որի վերաբերյալ պատշաճ ծանուցվել էր «ՍԵՆԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերությունը: Վերջինիս ներկայացուցիչը ապահովել էր նիստին իր մասնակցությունը:

Նիստի ընթացքում Ընկերության ներկայացուցիչը ներկայացվել է արձանագրված իրավախախտման վերաբերյալ Ընկերության դիրքորոշումը, հայտարարելով, որ միևնույն առարկայի վերաբերյալ, միևնույն հիմքով առկա է դատական գործ՝ ՎԴ/13916/05/25 վարչական գործը, առաջարկելով օրենքով սահմանված կարգով որոշում կայացնել՝ վարչական վարույթը կարճելու մասին:

3. Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, սույն օրենքով սահմանված կարգով, իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետի համաձայն՝ օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ/ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.«ՍԵՆԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 33/25 վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի և 71-րդ հոդվածի «ա» կետով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2025 թվականի նոյեմբերի 17
ք.Մեծամոր